



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 հուլիսի 2020 թվականի թիվ 60-Ա
ք. Երևան

«ԲԵՂԱՅՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԲԵՂԱՅՆ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի հունիսի 29-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Բավարարել «ԲԵՂԱՅՆ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կինոսերիա» «Կուխնյա ՏՎ» «Լյա-Մինոր»	31.12.2020թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ կինո» «Բոբյոր» «Դոմ կինո պրեմիում» «Վրեմյա. դալոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Սուզիկա Պերվոգո»	31.12.2020թ.
«Մատչ! Պլանետա» «Կինոպրեմիերա»	31.12.2020թ.